Միտինգի են դուրս եկել ակադեմիկոսները

Երեկ կեսօրին մարդաշաս էր ԳԱԱ բակը, ուր հավաքվել ու իրենց դժգոհությունն էին հայտնում ակադեմիկոսները, գիտնականները, գիտաշխատողները եւ ողջ ակադեմիայի անձնակազմը: Վերջին 5 ամիսներին չեն վճարվել աշխատավարձերը, չեն ֆինանսավորվել, թեկուզ մասնակի, գիտական աշխատանքները: Ահա թե ինչպես պարզաբանեց առաջացած ծանր իրավիճակը ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը, որն արդեն մի քանի ամիս փորձում է ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի հետ լուծել այդ հարցը: Ցավալին այն է, որ երբ պլանավորվել են գիտական աշխատանքները, հանձնաժողովների կողմից ներկայացվել են որոշ թեմաների ֆինանսավորման աշխատանքներ (աշխատավարձ, աշխատանքների ապահովում, գազ, ջուր, կապի միջոցներ, լույս, տրանսպորտային ծառայություն): 1999 թ. հոկտեմբերի 1-ից նշված այլ նպատակով ոչինչ չեն սացել, աշխատավարձից բացի, այն էլ արդեն դադարեցված է 5 ամիս: Երբ

Ֆ. Սարգսյանը փորձել է պարզաբանել չվճարման պատճառները, պարզ է դարձել, որ պետբյուջեում թեմաների ֆինանսավորումը նախատեսվել է այլ ծախսեր հողվածով, որը պատրաստված հողված չէ (պարտադիր վճարում չէ): Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վ. Խաչատրյանը հարցին մանրամասն տեղեկանալուց հետո մեկ ամսվա (օգոստոս) աշխատավարձը մի կերպ տվել է: Նա միաժամանակ խոստացել է դեկտեմբեր ամսին վճարել նաեւ սեպտեմբերի աշխատավարձը: Այդ սխալ ծեւակերպման պատճառով գիտնականներն այս տարի կզրկվեն 3 ամսվա աշխատավարձից ու մնացած հատկացումներից մոտ 243 մլն դրամ: Չմոռանանք, եթե ԳԱԱ-ն չստանա գրանտներ (որը ոչ միշտ է հաջողվում), ապա գիտնականների աշխատավարձը կկազմի ընդամենը 10 հազար դրամ: Ահա այս ցավալի իրավիճակն էր մեր գիտնականներին ստիպել դուրս գալ միտինգի եւ իրենց արդարացի բողոքի ձայնը բարձրացնել:

Միտինգում որոշվեց մեկ շաբաթ ժամանակ տրամադրել կառավարությանը հատկացումները կատարելու համար, իսկ եթե այդ ժամկետում դրական պատասխան չտրվի, ապա գիտնականները լուրջ ու հետեւողական քայլերի կդիմեն:

Այս ամենն, իհարկե, պարզից պարզ է, սակայն պարզ չդարձավ, թե ինչու խաղաղ միտինգավորներին հանկարծ շրջապատեցին «հատուկ նշանակության ջոկատի» զինված զինվորները:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՆՈՒՇՅԱՆ